

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ԱԴՀՆՅՈՒԴԻ, Կայ մի հիւանդութիւն, որ ինքն ըստ ինքեան-աննշան է, բայց իւր ետևից բերում է մի շարք անախորդ բարդութիւններ մանկական հասակում։ Այս հիւանդութիւնը կոչվում է ադէնօիդ։ դրագեղային գոյացութիւններ են քթա-ըմպանային տարածութեան մէջ, քորոցի գլխի շափից մինչև կեռասի մեծութեան և երբեմն էլ աւելի մեծ, որ լցում են քթա-ըմպանային տարածութիւնը։ Այս նոր գոյացութիւնները երեւում են 10 ամսական երեխանների վրայ, աւելի մեծ ծաւալստանալով 5—15 տարեկան ժամանակ։ այնուհետև անյայտանում են։ Այս հիւանդութիւնն ունենում են խացաւ ունեցողները և թոքախտաւորների որդիքը։ Սառը կիմայում համեմատարար շատ է պատահում, քան տաքում։ Այս հիւանդութեան նշանները խիստ բազմազան են։ Քթի տեսական դում (բատարք), կերկերութիւն, բաց բերանով քուն, գիշերը տակը միզելը, գիշերային վախ, ըմպանի ձգտումն, ցնցումն, մտաւոր թուլութիւն և ցրուածութիւն, աճելութեան դադարում, լսողութեան բթանալը, գլխացաւ, ծովութիւն, անուշադրութիւն և այլն։

Այս հիւանդութեան վերայ առաջինը ուշադրութիւն դարձրեց Դանիական բժիշկ Վիլհելմ Մէկըրը։ Այս հիւանդութիւնը խիստ հեղինակաւոր բժիշկներից ճանաչուած է վնասակար երեխանների ֆիզիքական և մտաւոր աճման համար և ազդեցութիւն ունեցող նոցա գպրոցական պարապմունքների վերայ։

Դրասոր Վիլբէրդը զգուշաւոր քննութեան ենթարկեց 315 աշակերտ $6\frac{1}{2}$, ից մինչև $12\frac{1}{2}$, տարեկան հասակը, որոնցից 281 (62%) ադէնօիդ ունէին։ Նոցա մէջ 122-ը հիւանդութեան երեսոյթներ ունէին, կը ադէնօիդի հետ 106 աշակերտ, այսինքն բոլոր քննուած դէպքերից 28% , ականջի խանդարում ունէին, 63 դէպք երկու ականջների հիւանդութիւն։ 48 դէպք մի ականջի։ Ադէնօիդի հեռացնելուց յետոյ գրեթէ ամենքի լսողաւթեան ծանրութիւնն անցաւ։

Ադէնօիդի՝ մտաւոր զարգացման վերայ ունեցած ազդեցութեան մասին յիշեալ բժիշկը հետևեալը տեսաւ։ 26 երեխայ ուսուցիչներից ճանաչուեցան սակաւ ընդունակ և վատ ձիքը տէր, 84-ը ծոյլ և անուշադիր։ դոցանից 85% գտաւ առաջին-

տեսակի և 77% երկրորդ։ Վելրէրտ բժշկի կարծիքով 78% պէէնօիդ ունեցող երեխաներ ֆիզիքական և հոգեկան խանգարումներ ունեն։ Այս է պատճառը, որ նա այս հիւանդութեան ամեն դէքերում առանց բացառութեան անհրաժեշտ է համարում անդամահատութիւնը Վերը յիշած կարճ տեղեկութիւնները, որոնք վերաբերում են մանկական գիլտառապէս 2—12 տարեկան հասակին, ըստ երևոյթին այնպիսի մի դատարկ հիւանդութեան, ինչպիսին ադէնօիդն է, որ իւր հետևանքներով չափազանց վտանգաւոր է երեխաների ֆիզիքական և մտաւոր զարգացման, նոյնպէս և դպրոցական պարապմանց համար, պէտք է իւր վերայ դարձնէ ինչպէս ծնողների, այնպէս էլ մանկավարժների խիստ լուրջ ուշադրութիւնը։ Աշակերտաների պարտադիր բժշկական զննութեանց ժամանակ պէտք էր ուշադրութիւն դարձնել և ադէնօիդի վերայ, յատկապէս հրաւիրելով կոկորդի հիւանդութեան մասնագէտ բժիշկներ։ (Տ. լլ.)։

ԿՈՅԲՐԵՐԻ ԱԶՔԲԼ ԼՈՅՑ. Պրօֆէսսօր Ստիէնսը հնարել է կոյրերի համար մի գործիք։ Նա ենթադրում է, որ յատուկ գործիքը շնորհիւ գտել է կոյրերին տեսութիւն վերադարձնելու եղանակը, և ոչ թէ միայն նոցա, որոնք մի ժամանակ աչք են ունեցել, այլ և ի ծնէ կոյրերին։ Ստիէնսը երկար տարիներ աշխատել է այդ գիտափ վերայ։ Ամենից առաջ նա իւր գործիքը պատրաստել էր անացների համար, լոյս հաղորդելով անմիջապէս ուղեղին, ներկայումս դարձեալ մանրամասն տեղեկութիւններ չունենք, որովհետև յիշեալ պրօֆէսսօրը մտադիր է մեծ փոփոխութիւններ մտցնել իւր յայտնազործած գործիքում և առ ժամանակ գաղտնիք է պահում։ Այնուամենայնիւ բժշկապետ Գազին յաջողել է իւր վերայ փորձել նորա գործիքը, որ և հիացում է պատճառել իրան։ «Պրօֆ. Ստիէնսը, պատմում է Գոզը, — ներս տարաւ ինձ մի փոքրիկ մութ սենեակ և աչքերս պինդ փակեց։ Նո բոլորովին բան չէի տեսնում և լոկ լսում էի։ որ իմ շուրջը ման են գալիս, լուցկին շրիկացնում և լամպ են վառում։ չնայելով իմ ջանքերին՝ ես չկարողացայ որոշել թէ լոյսը որ կողմիցն է զախիս։ Այդ միջոցին ես զգացի, որ պրօֆ. Ստիէնսը քոնքերի դրեց իւր գործիքը և նոյն վայրկենին թոյլ լոյս տեսայ, որ ընկած էր ինձ մօտ եղած դրսի առարկաների վրայ։ Ապա ես կարողացայ պարզ որոշել աչքիս առաջ եղած մի ձեռք և նորա փոռուած մատները ընդամենը երեք հատ։ Փոքր առ փոքր լոյսը մեծացաւ և ես ազատ ջոկում էի սենեկի բոլոր իրերը։ Այն ինչ ինչ թւում էր, որ եթէ փորձը շարունակուէր, այնպէս կընտելանայի այդ գործիքին, որ կարող էի բոլոր տռարկաներն այնպէս ազատ որոշել, ինչպէս իմ սեպհական աչքով։ Փորձի ժամանակ ես լաւ զգում էի ելքերական մի թեթև հոսանք, որ անցնում էր քոնքերով։ Յանկարծ պրօֆ. Ստիէնսը գործիքը վեցըրեց աչքերիցս և ես նորից ընկղմուեցի խոր մթութեան մէջ։ Փորձը տարատուեց։ Պրօֆ. Ստիէնսը մի քանի ուրիշ պրօֆէսսօրներին հետևեալ մանրամաս-

Նութիւններն է հաղորդել խըր գիւտի մասին. «մարդ ոչ թէ աչքերով է տեսնում, այլ ուղեղով: Աչքերը միայն ծառայում են ձևակերպութիւնները ստանալու, որ ակնանեարդը անմիջապէս հաղորդում է ուղեղին: Կոյքերի աչքերին փոխարինում է շշափելիքը և այդպիսով ճիշտ հասկացողութիւն են ստանում առարկաների ձևի մասին: Նթէ մարդ աչքերից զրկուի, նոցա կը փոխարինէին ուրիշ գործարանները Քանի մի ստորին կենդանիներ բոլորովին աչքեր չունեն, նոքա տեսնում են այսպէս ասած ամբողջ մարմնով: Հետևապէս եթէ որ և է պատկեր կարող է ուղեղին հաղորդուել առանց աչքի, ուրեմն և կոյցը կարող է նյոյնպէս պարզ տեսնել, ինչպէս և աչք ունեցողը: Սոքա են պրօֆ. Ստիէնսի հրմանքները: Ձևակերպութիւնը փոխանակ աչքի ցանցամաշկի վերայ ստացուելու՝ նկարում է լուսարգելի վրայ. յետոյ ելեքտրական հոսանքով հաղորդում է ուղեղին: Ուրեմն գործիքը նոյն հիմունքով է շինած, ինչպէս և հեռախոսով: Պրօֆ. Ստիէնսը ենթադրում է, որ այս գործիքը ոչ միայն կոյքերին լոյս կարող է տալ, այլ և հեռաւորութեան վերայ կտայ առարկաների ձևակերպութիւնը, ինչպէս որ հեռախոսը հաղորդում է ձայնը: (Ացր. Բ.):

ԵԼՅԲՏՐԱԿԱՆ ԿԱՊՍԻԽԼՆԵԲԻ: «ԽօՏ. ՃԱՅ»-ի թղթակիցը այցելելով բժշկապետ Յանկմէնի գործանոցը Բիւֆայօւում, պատմում է հետևեալը. «բժշկականութեան մէջ մի ցնցող նորութիւն է ելեքտրական կապսիւները: Երևակայեցեք, որ յաջողել է նորան ելեքտրականութեան ահադին ոյժ ամփոփել առաձգական փորբիկ այնպիսի կապսիւկի մէջ, որ գործ են դնում անհամ դեղերի համար. Յայտնագործողը ցոյց տալով ինձ այդ կապսիւները հաղորդեց, որ դռքա լցուած են սովորական սառցի խիստ ելեքտրացրած հատիկներով: Ինչ վերաբերում է առաձգական թաղանթին, թւում է որ դա կազմուած է մի քանի կիսաթափանցիկ շերտերից, բայց թէ ինչիցն են շինուած և ինչու նոքա իրանց միջոցով չեն թոյլ տալիս դատարկուելու ներսը զետեղուած խիստ լցուած մարմնին, կամ աւելի ճիշտ, թոյլ են տալիս միայն դանդաղ կերպով դուրս գալ, այս բոլորովին անյայտ է ինձ, որովհետո յայտնագործողը իսպաս ծածկում է «ելեքտրական կապսիւների» պատրաստութեան տեխնիկական մանրամասնութիւնները:

Առ այժմ ես կարողացայ այս կապսիւների ներգործութիւնը դիտել մարդկային յօրինուածքի վերայ. դա ուղղակի հրաշք է:

—Կը կամենամք մի կապսիւկ կուլ տալ.—սիրալիր կերպով առաջարկեց ինձ բժշկապետը.—Դուք առաջին մարդը կլինիք, որ ինձանից յետոյ տեղեկութիւն էք ստանում սորա մասին, ու ըսվիետ ես երրորդ ամիսն է արդէն որ սոցա ներգործութիւնը փորձում եմ ինձ վերայ: Կապսիւները կամաց կամաց լուծում են մարսողական ճանապարհով և անյայտ կորչում:

Սկզբում ես դէմ ընկայ, բայց «առաջին մարդը» ազ-

դեց և որոշեցի կուլ տալ: Մի քանի ըոպէից յետոյ զգացի, որ ինչ որ արտասովոր բան կատարուեց իմ մէջ. ես կարծես թեթև զգացի ինձ, արիւնն սկսեց արագ հոսել երակներով. ինձ թուաց մինչև անգամ, որ այս արեան խաղն զգում էի. յետոյ ցանկութիւն զգացի շարժուելու, խօսելու, առհասարակ մի արտակարդ եռունդ:

—Դիտէք այժմ ինչ կուլ տուիք, —նենգութեամբ հարցրեց բժիշկը:

—Ի սէր Աստծու, այս ինչ էր: Անմահութիւն էր թէ հին չաստուածների նեկտար:

—Դուք կուլ տուիք երկրային ոյժի մի մասնիկ, նոյն բանի մասնիկը, որ կեանք է տալիս ոչ թէ մեր երկրին և ուրիշ մոլորակներին, այլ և իրան արեգակին: Նթէ յոյսերս արդարանան, այն ժամանակ մարդկային տկարութիւնները, գուցէ և նոյն իսկ մահը, աւանդութեանց շարքը կմտնեն: Առ այժմ էլ ուրիշ ոչինչ չեմ կարող ասել ձեզ:

Ըս ես առ այժմ էլ բան չեմ կարող ասել, բացի նորանից, որ մի կապսիւլից ես ինձ վերին աստիճանի յաւ զգացի մի ամբողջ օր:

ՍԱՐԿՈՄԱՅԻ ՄԱՆՐԵՆ: «Եւր. Տաց.» լրագրի ասելով մեծ աղմուկ հանեց բժշկապետ Ռոսաի զեկուցումը, որ կարդացել է այս օրերս Լօնդոնում: Ռոսաը յայտնում է, որ իրան յաջողել է գտնել այն մասնէները, որոնք առաջ են բերում ժանտուոյցքները —սարկօմայի քաղցկեղը: Բացի դորանից, ընթէրէնտը բազմաթիւ դիտողութիւններից այն եզրակացութեան է հասել, որ այդ ուռոյցների երեալու պատճառը քլորի պակասութիւնն է հիւսուածներում: Ամենալաւ միջոցը քաղցկեղի դէմ, նորա կարծիքով, կերակրի աղն է: Այս միջոցով բժշկ Ռոսաը բժշկել է քաղցկեղով հիւանդներին և հասել է նշանաւոր յաջողութեան: (Ջ. Պ.)

ԸՆԿՈՒՀՁԻ ԱԶԴԻՑՑՈՒԹԵԱՆ ԱՌՈՂՃՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ. Խոպանացի գիտնական բժշկապետ Մունոցը հրատարակել է մի հետաքրքրական հետազոտութիւն ընկուզի նշանակութեան մասին, որպէս սննդեան տարր: Ընկոյզը, ինչպէս և նման բոլոր պատուները, պարունակում են իրանց մէջ իւղ, կարբօնհիդրատ, ցէլիեկօզ, անդործարանաւոր աղեր, ջուր և այլն: Բացի դորանից, ընկոյզը առանձին ներգործութիւն ունի մարդկային յօրինաւածքի վերայ: Օրինակ եթէ առողջ մարդը առաւօտ երեկոյ ութ ութ մեծ ընկոյզ ուտէ դեմքրտի փոխարէն, այն ժամանակ, բժշ. Մունոցի կարծիքով, այդ մարդու մէջ առաջ է գալիս արեան զօրեղ հոսանք դէպ կային և մաղասամաշկերը: Երեսի գոյնը սաստիկ կարմրում է, շրթունքները նոյնպէս, նթէ աւելի քանակութեամբ ընկոյզ գործ դնեն, դորա հետեանքը շատ անգամ եղել է քթից արեանհոսութիւն: Սրտի գործունէութիւնը նշանաւոր կերպով զօրեղանում է, սրտի զարկերը խփում են աւելի արագ, աւելի ուժեղ: Նթէ աւելի շատ

են ուտում, արիւնը դէպի գլուխն է հոսում, տաքութիւն է է տալիս, զիմի պտոյտ և անգամ զիտակցութեան կորուստ: Այս փորձերից, որոնք կատարուել են առողջ մարդկանց վերայ, կարելի է լուրջ եզրակացութիւններ հանել ընկուզի գործածութեան նկատմամբ հիւանդութեանց դէպերում: Ընկոյզը իմիստ օգտակար է արեան պակասութեան, դժգունութեան և այլ ամեն նման հիւանդութիւններին, որոնք կախումն ունին արենատար գնդիկների պակասութիւնից: Փորձերով ապացուցուած է, որ տուրերկութեօզի ժամանակ ընկուզի գործածութիւնը պարզ կերպով բարձրացրել է բարեխառնութիւնը: (Mo8.)

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ ՆՈՐ ՄԵՏՈԴ:—Հիւախային Միացեալ նահանգների ազգային լուսաւորութեան նախարարութիւնը մի հետաքրքիր հրահանգ է հրատարակել և ուղարկել գըպրոցական վարիչներին: Այս «ըշջարերական-ծրագիրը» որոշում է դպրոցական դաստիարակութեան և ուսման նոր մետողի սկզբունքները: Այդ հրահանգի հիմնական միտքն այս է. գրեթեով կրթութիւն տալը վնասակար է ընախօսական տեսակի տիցից: Դպրոցը չե պէտք է մոռանայ, որ երեխան ամենից առաջ և ամենից աւելի շարժողութեան պէտք ունի: Դպրոցը պէտք է վերադառնայ հին հելլէնական մանկավարժական եղանակին, երբ պատանիները իւրացնում էին փիլիսոփայական և այլ իմաստութիւններ՝ զրօննելով... Թող կորչեն գրեթեը: Երեխայք թող որբան կարելի է զրօննեն: Հարկաւոր չէ չորս պատերում նըստած սովորել, դպրոցականները պիտի սովորեն՝ յաճախելով թանգարաններ, կենդանաբանական պարտէզներ ու գործանոցներ: Նոքա կրիտեն արձանները և պատմական արժանայիշատակ տեղերը: Դիտողական ուսում—ահա ինչումն է պարունակում մանկավարժական նոր ճշմարտութիւնը:

Այսուհետեւ: ըշջարերականը մատնացոյց է անում, որ ուսուցիչները պէտք է ձգտեն, որ դպրոցական կրթութիւնը ըստ կարելոյն աւելի անհատական լինի: Նոքա խնամքով պէտք է սովորցնեն ամեն մէկ երեխայի փիլիքական կազմութիւնը, նեարդային համակարգութիւնը և մատառոր ընդունակութիւնները: Իւրաքանչիւրին դպրոցը պէտք է միայն այն տայ, ինչ որ նա կարող է օգտակար կերպով իւրացնել:

ՈՍԿՈՒ ԶԵՌՈՔ ԲԵՐԵՆԸ ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ: Երկի մէջ ոսկեխառն երակների ներկայութիւնը մինչև այժմ շատ բարդ ձևով էր որոշուում. անհրաժեշտ էր երկերը ծակել և հանգերի տեսակներ հանել միջից: Որովհետեւ ոսկին գտնուում է քարային մասերում բարակ երակների ձևով, ուստի ստիպւում էին շատ անգամ մի քանի հազար ծակ բանալ, գէթ մի երակ գտնելու համար: Ներկայումս ոսկի գոտնելու եղանակը չափազանց պարզ ձևի են վերածել, այն է՝ ելեքտրականութեամբ: Անգիտացի ելեքտրոստատիկներ Ալֆրեդ Վիլհամսի և Լեվ Դավտի այդ նպատակի համար հնարած գործիքը նման այն գոր-

Ֆիքի, որ գործ է դուռմ Մարկոնին անթել հեռազըի համար, միննոյն կերպով հիմնում է եկեղեցական ալիքների յայտնի յատկութիւններից օգտուելու վերայ. Մարկոնին անթել հեռագրելիս, ինչպէս յայտնի է, բայց է թողնում որոշ քանակութեամբ եկեղեցական ալիքներ, որոնք և հաղորդում են հեռագիրը. Նոյն եղանակով վարւում են և Վիլիամսն ու Դաֆտոր. Զանազանութիւնը նորանումն է միայն, որ նոքա եկեղեցական ալիքները օդի միջով են ուղղում: Ալիքները նոքա ստանում են մի առանձին գործիքով, որ շատ բարդ լինելով՝ չենք նկարագրում: Եկեղեցական ալիքների գետնի մէջ թափանցելիս ստացած դիմագրութիւնը փոխվում է, նայելով պատահած նիւթերի տեսակին: Մի քանի քարի տեսակներում այդ դիմադրութիւնը շատ սաստիկ է, բայց շատ թուլանում է, երբ մետաղին է հանդիպում: Այս հանգամանքից են օգտում և Վիլիամսն ու Դափտոր ուկի գտնելու համար: Նոքա նշտիւ չափում են ալիքների դիմագրութիւնը: Հենց որ նա յանկարծ ցածրացաւ, այդ նշանակում է, որ մետաղի երակ է գտնուած:

Այն տեղը, ուր որ ուզում են տեսնել ուկի կայ թէ չէ, Յ հոգի միասին աշխատում են. մէկը յիշեալ գործիքով եկեղեցականութիւն՝ ուղղում դէպի երկիրը. միւս երկուաը երեեմն երեեմն՝ եկեղեցական ալիքները ընդունող առանձին փայտի գործիքով չուտ շուտ փորփրում են գետինը: Ալիքի ոյժի փոփոխութիւնը կարելի է իմանալ կամ չափող գործիքով և կամ հեռախօսով: Սորա համար վերցնում են առանձին պատրաստուած հեռախօս, որ ճայթիւններ է հանում: Վերջինս մնում է անփոփոխ, քանի որ ալիքների ստացած ընդդիմադրութիւնը միակերպ է: Հենց որ դիմադրութիւնը փոխուեց, ձայնը զօրեցանում է կամ թուլանում: Ամեն փոփոխութիւն, որ ցոյց է տալիս թէ մետաղի է հանդիպել, իսկայն նշանակւում է ուրեմն չափու գործիքով կամ հեռախօսով և համապատասխան տեղում ուկում են փորել: Վիլիամսի և Դափտոր գործիքը մի քանի տարի առաջ մտցրին Տրանսվալում ոսկի խուզարկելու ժամանակ և կատարելապէս գոհացում ստացան: (Մօ.3.)

ԿիԱՆՔԸ ԵՐԿԱՐՈՑՆԵԼՈՂ ՆՈՐ ՓՈՐՉ: «Հումայի» անցեալ համարում առաջ բերինք բժշկապետ Կուկեաթկօի կատարած արտակարգ հետաքրքրական փորձերի մանրամասնութիւնները սիրտը կենդանացնելու վերաբերմամբ: Ամբողջ մամուլի մէջ երևեցան յօդուածներ այդ մասին, որոնք յոյ էին յայտնում, որ էսօր էգուց ամեն մի բժիշկ կարող կլինի կենդանացնել այն հիւանդին, որի սիրտը չկարողանալով հիւանդութեան զարդացը առաջ տօկսինների ազդեցութեանը համակերպուիլ, դադարել էր գործելուց: Այս յօյսերն ի հարկէ վաղաժամ են, բայց այնուամենայիւ ինչպէս յիշեալ, այնպէս էլ վերջին տարիներս եղած մի քանի ուրիշ փորձերում, յոյս ներշնչող, ուրեմն և հեռագրական խիսա շատ բան կայ:

Փարիզի յայտնի վիրաբոյժ և բժշկական դպրոցի պլոֆէ-

սօր Տիւֆիին, վիրահատելով մի հիւանդին, դժբաղդութիւն ունեցաւ կորցնել իւր հիւանդին. նա մեռաւ քլորակերպ տուած ժամանակ վիրահատելիս: Ի հարկէ գործ դրուեցան կինդանացնելու համար արհեստական շնչառութիւն, ելեքտրականութիւն, ամեն տեսակ զարթեցնող և այլ միջոցներ: Բայց բոլորն անօգուտ: շունչը չբանեց, սիրտը չը գործեց, կեանքը յետչեկաւ: Սպա Տիւֆիին բաց արեց լանջախորշը մինչև սիրտը և փորձեց զարթեցնել մերսելով, այսինքն կանոնաւոր սղմելով սրտի մկանը: Սակայն դարձեալ անօգուտ:

Բացի Տիւֆիից մի քանիսը (Միկօն, Գալլէն, Մօկկէրը) նըման հանգամանքներում փորձեցին սրտի վերայ ազդել նոյն ձևով, բայց սրտի կենդանացումը անհնար երկեցաւ այժմեան բժշկականութեան յայտնի սովորական միջոցների օգնութեամբ: Բայց այս անյաջող փորձերի մէջ մէկը եղաւ, որ վերջի վերջոյ դրական հետևանքի չհասցրեց, բայց պարունակում է իւր մէջ այնպիսի մանրամասնութիւններ, որ իրաւունք է տալիս շարունակել փորձեր այդ շաւով:

Նոյն Տիւֆիի վերաբոյժի մի հիւանդ յանկարծ մեռաւ անդամանատութիւնից հինգ օր յետոյ: Մեռաւ այն վայրկենին, երբ Տիւֆիին սկսեց հիւանդներին այցելել հիւանդի սենեկին մերձակայ սենեկաներում: Տիւֆիին խակոյն յայտնուեց մեռնողի անկողնի մօտ: Նորից բերուեց միջոցների բոլոր կազմը, որոնք անհրաժեշտ էին կենդանութիւն ներշնչելու. ամեն ինչ դարձեալ խնամքով կատարուեց: զարկը չկար, սիրտը չէր գործում, մահը մտաւ իւր իրաւանց մէջ: Այսուհետև Տիւֆիին նորից դիմեց մի անդամ արած իւր անյաջող փորձին. կրծքի խոռոչը բացեց և սկսեց սիրտը մերսել: Մի առժամանակ ոչ մի հետեւանք չերեւեցաւ. ապա սիրտն սկսուեց թոյլ կերպով կծկուել. վերջապէս սկսեց գործել կանոնաւոր և ուժեղ: Մեռածը շունչը բաշեց մի անդամ, ապա երկրորդ, երրորդ և այլն անդամ: Նա գլուխը շուռ առուեց, ինչպէս անզգայութիւնից յետ եկած մի մարդ. Մերսելը դադարեցրին. սիրտը շարունակ զարկում էր, զարկը կարգին էր և բաւական ուժեղ: Վէրքի վերայ կօմպրէս դրին փոքր առ փոքր զարկը թուլացաւ, յետոյ բոլորովին կանդ առաւ. սրտի զարկը նոյնպէս դադարեց: Տիւֆիին նորից սկսեց մերսել, և նորից սիրտը սկսեց գործել, նորից նոյն ձևով կենդանացաւ սիրտը և դարձեալ քիչ ժամանակից, հէնց որ մերսելը թողին, զարկը թուլացաւ և քիչ քիչ բոլորովին անյայտացաւ: Հետադայ փորձերն արդէն անպտուղ անցան բոլորովին:

Այսպէս ուրեմն թէպէտ անյայտացած կեանքը երկարացնելու նորագոյն փորձերը դրական հետևանք չունեցան, բայց նոցա մէջ շատ բան կայ, որ ստիպում է մի փոքր յուսով նայել ապագային: (Խօթ.)

ԹՈՒԹԱԽՏ (ԵՐԵՎԱՆ) — Պրօֆ. Բէրինգը
 դատել է մի միջոց, որ պահպանում է թոքախտից: Նորա ասե-
 լով, կատարուած փորձերը ցոյց տուին, որ պալարիաը, եթէ
 սրսկեն նախնական հասակում, կարողանում է նախապահպա-
 նել պալարախտով (ԵՐԵՎԱՆ) վարակուելուց: Բէրինգը
 սրսկեց 4 հազարագրամ տուբերկուլին, որ ստացել էր մարդու
 պալարախտային մանրէներից խառը նոյն քանակութեամբ ջրի
 հետ: Բոլոր դէպքերում ամենից առաջ ապացուցուեց որ այս
 դեղը բոլորովին անվիճակ մի բան է: Որքան փոքր էր կենդա-
 նին որին սրսկեցին, այնքան պակաս ընդդիմադրութիւն ցոյց
 տուեց նա պատուաստման: 100 դէպքերից ոչ մինը հակառակ
 չէր այս դիտողութեանց: Պատուաստուած կենդանիները յետոյ
 տեղաւորուեցան վարակուած ախոռներում, նորից պատուաս-
 տեցին եղջերաւոր անասունների տուբերկուլինով, որ անպայ-
 ման մահաբեր էր եղած, միւս բոլոր չպատուաստուած կենդա-
 նիների համար. իսկ այն կենդանիների ներսը, որոնք նախապէտ
 պատուաստուած էին, եղջերաւոր անասունների տուբերկուլինի
 սրսկումը տուբերկուլիոզով վարակման ոչ մի հետք չտուին:
 Այս փորձերի հիման վերայ պրօֆ. Բէրինգը իրաւունք է համա-
 րում իրան յայտարարել, որ ծծկեր երեխաններին և մանկական-
 հասակին տուբերկուլեզի վարակումից նախապաշտպանելու
 միջոցը տնկասկած կյածողի գտնել: Առաւել կասկածելի խնդիր
 է արդէն զարգացած տուբերկուլեզի հետ մաքառման հարցը
 (Մօ8. 1):

ՄՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ: Բէրինում մօ-
 տերս բժշկապետ Մաքս Ալը մի գիրք լոյս ընծայեց «Wer ist
 herzkrank» վերնադրով, որ մի նոր հետազոտութիւն է ներ-
 կայացնում սրտի և նեարդային հիւադութեանց մէջ եղած
 կապի մասին և որ պարունակում է իւր մէջ նոր եղանակ սրտի
 հիւանդութիւնները բուժելու:

Հեղինակը բազմաթիւ օրինակներով ապացուցանում է
 որ նեարդային թուլութիւն ունեցողների և թուլաններկերի
 մնծ մասը իսկապէս ոչ թէ նեարդային հիւանդութիւն ունին
 այս խօսքի բուն իմաստով, այլ սրտի:

Սրտի ամենափոքր փոփոխութիւնը նեարդային դրու-
 թեան տանջանքներ է առաջացնում: Հեղինակը բացատրում է
 բոլորովին առողջ մարդկանց սրտի կաթուած ստանալու ա-
 ռեղծուածային դէպքերը:

Հեղինակը մատնացոյց է անում սրտի հիւանդութիւն-
 ների խիստ տարածուած լինելը և սխալ լինելը այն տարածուած
 կարծիքի, թէ իւրաքանչիւր՝ սրտի հիւանդութիւն ունեցող դա-
 տապարատուած է շուտափոյթ և անխուսափելի մահուան:

Գիրքը գրուած է շատ հետաքրքրական և ժողովրդական
 ոճով և կարող է օգտակար լինել այն ամենքի համար, ով ցան-
 կութիւն ունի իւր ոյժերն ու առողջութիւնը պահպանել: (Մօ8.),

Օր. Նուարդ Սաղանեանց